

ԱՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարինյ	համար
Տարեկան	12 ֆր
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Ամերիկայի	համար
Տարեկան	3 ցր.
Վեցամսեայ	1.50 »

Քաղաքացիական տարրական դպրոցի համար 10 ս. խի վերին երեսի համար 20 սանթիմ կ. երեքին անկյունի անկյուններու համար 20 0/0 զեղչ կընշայ:

Վաճառքի համար մեկ 10 սանթիմ

ՁԱՐԹՈՒՄ

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՆՆԵՐ ԲԱՂՈՒՄԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՉՐ ՏՐՈՒՄԻ ԶՈՐԵՔՆԱԲԻՆ ԵՒ ՇՈՒԲԻ ՕՐԵՐԸ

R. P. Kalmecarian, Mechitharistengasse
(Aubriche) W. 4.
Vienna

Նախկին Երևանի թղթի
և տպագրության գործարանի
գեղարվեստ

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoun“
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
մեկ (20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարինյ համար
մեկ (15 ՍԱՆԹԻՄ)

Գրքերի մեկ կամ քանի

Առ Ն. Ս. Օժոթին
Տ. Տ. Մկրտիչ Վեհափառ Կաթողիկոս
Խրիմեան Բնդահարական Հայրապետ
Ամենայն Հայոց
Յեղիսիան

Վեհափառ Տէր
Հայոց եկեղեցական կալուած-
ները գրաւելու մասին Ռուս կա-
ռավարութեան որոշումը մեծ
վիշտ պատճառեց ինչպէս ամբողջ
Հայութեան, նոյնպէս այլ Վառ-
նայաբնակ Հայերուս:

Հայ ազգը, որ սրտատրոփ կը
պայտէր իր Վեհափառ Հայրապետ-
ին որոշումը լսելու, գերազան-
ցապէս գոհ չգաց ինքզին-
քը, սեննելով որ այս ծանր
հարուածին տակ դուք՝ Վե-
հափառ Տէր, և Ձեր ստորագա-
սեալ Թարգման հոգեւորականութիւ-
նը, Ձեր կողման բարձրութեան
վրայ մնացիք և չի համակերպե-
ցաք ստորագրելու այն պաշտո-
նաթուղթերը, որոնցմով պիտի
յափշտակուէին ամբողջ Հայու-
թեան կարևոր հարստութիւնը:
Նոյն կորովի ընթացքով չէի՞ն
վարուէր, հին դժբաղդ դարերու
մէջ, մեր ներսնաններն ու Սա-
հակները, երբ ազդարին իրա-
ւունքներու դէմ գործուած յա-
փշտակութեան մը ենթարկուէին:

Սրդ՝ մեր անսահման ուրա-
խութիւնը յայտնելով Ձեզ, Վե-
հափառ Տէր, Ձեր պարտաճանա-
չութեան համար, խոնարհաբար
կը խնդրենք Ս. Օժոթինեդ՝ որ
անդրադուրի մնաք Ձեր այդ կո-
րովի որոշման վրայ, և ամեն
զոհողութիւն յանձն առնելով՝
երբեք չի զիջանիք Հայ ազգին
հարստութիւնը Ռուս կառավա-
րութեան յանձնելու: Եւ թող
ամբողջ աշխարհ հասկնայ թէ
հայաժուած հայ ազգը և անոր
Հայրապետը դեռ գիտեն իրենց
իրաւունքները պաշտպանել և

զանոնք ոտնակոխ ընել չի տալ
նոյնիսկ ամենազորեղ կառավա-
րութեանց:

Առ այս մտղմելով Ձեզ անսահ-
ման եռանդ ու արիւթիւնը
Մնամք որդիք
խոնարհ որդիք Օժոթի
Ս. Օժոթինան

7 Սեպտեմբեր 1903
Վառնա

Անա հրատարակում ենք այն գը-
րութիւնը, որը պատրաստված է կի-
րակի օրը ժողովրդի հաւանութիւնը
ստանալուց յետոյ ստորագրելու ա-
ռաջարկի և թաղական խորհրդի մի-
ջոցաւ ուղարկել Կաթողիկոսին:
Վառնայաբնակ հայ ժողովուրդը
միշտ ընդունակ է եղել մեծ բազմու-
թեամբ ներկայանալ իր պարտակա-
նութիւնը կատարելու դէպի հայրե-
նիքը և ազգը: յուսով ենք որ այս
կիրակի էլ նա խուռն բազմութեամբ
ներկայ կը լինի եկեղեցու բակում,
որպէսզի հասկնայ թէ իր սնունդ
այս փափուկ պարագաներում, ինչ
է գրվում Ամենայն Հայոց Կաթողի-
կոսին և իր հաւանութեամբ վա-
ւերացնէ այդ գրութիւնը:

Մեր ժողովուրդի այս թուով հրատա-
րակված երկու նամակներից մենք
տեսնում ենք որ կովկասի հայու-
թիւնը, Կաթողիկոսը և հոգեւորա-
կանութիւնը ոչ միայն արատազի-
չեն ամբողջ հայ ժողովրդին պատկա-
նող հարստութիւնը կամ միայն յանձ-
նելու որս կառավարութեան, այլ և
արիւթիւնը ունեն թողքել բաւա-
կան յանդուգն կերպով, որս կառա-
վարութեան բարբարոս ու վանդա-
լական քայլի դէմ: Ուրեմն այնտեղ
առասական բռնակալի դէմադէմը,
թէ հայոց Կաթողիկոսը, թէ հոգե-
ւորականութիւնը եւ թէ ժողովուր-
դը, առանց կարեւորութիւն տա-
լու բռնակալի արամազորութեան տակ
գտնվող բազմութիւն զինւորներին ու
ոստիկաններին, քաջաբար, ամեն
վտանգ յանձն առնելով պաշտպանում
են թէ առսահայերի և թէ աշխար-
հի ուրիշ կողմերում գտնվող հայերի
սրբազան երաւունքները, բայց այդ
միայն բաւ չէ: Ռուսաստանից դուրս
գտնվող հայերս էլ պարտաւոր ենք
մեր պարտականութիւնը կատարել,
պարտաւոր ենք գոնէ բարոյապէս ու ժ-
տալ մեր իրաւունքը պաշտպանող եղ-

բայրներին և հոգեւորականութեան:
Այս պարագային մեզինքն ոչ մի զոհո-
ղութիւն չէ պահանջվում: Միայն
ստորագրութիւններ պետք են որոնք
իրբ իրակ են փաստ պէտք է ծառա-
յին աշխարհին և ուս կառավարու-
թեան ապացուցանելու համար, որ
հայր ուր որ էլ որ լինի, ինչ պա-
մաններ մէջ էլ որ ապրելիս լինի,
երբեք չի կարող լուս հանդիսանա-
լինել այն պարագաներում, երբ ա-
մենազորեղ պետութիւններն իսկ յան-
դուգն են յափշտակել իրենից այն,
ինչ որ դարեւոր, սերունդէ սերունդ
իրեն աւանդ տրւած է պահելու,
պահպանելու համար:

Այս մեզ թալանող աւազակը ու-
ժեղ է, և ելի ուժեղ քան աշխարհիս
բոլոր լեռնային կառապի ու վայրե-
նի աւազակները ի միասին: Բայց
այդ պատճառ չէ որ հայը, օրը ցե-
րէփով իր վրա յարձակուած գողնող
այդ խոշոր աւազակին չը գիմարէ:
Շատ անգամ թույլերն են յաղթող
հանգիստանում, երբ իրաւունքը և
արգարութիւնը իրենց կողմին է:

Այս պարագայում էլ իրաւունքը
մեր կողմին է, անպայման կերպով
և մեր այդ իրաւունքը լրբարար
ոտնակոխ է լինում որս պետութիւն
կողման հայգութից, որի համար աշ-
խարհիս մէջ ոչ մի սրբութիւն գո-
յութիւն չունի, երբ նա տրամադր-
ված է իր հայրուտի դերը կատարել
ամենաանպատկառ կերպով: Եւ մենք
հայրս, ուր որ էլ ապրելիս լինենք,
պարտաւոր ենք այդ վայրենարար
հայրուտին հասկնել որ իր ֆիզի-
քական հոգեւորական ուժի առջեւ մենք
ունենք նոյնքան հսկայական քարո-
յական ուժ և հսկայական առելու-
թիւն ու զգանք, որոնք որչափ էլ
թոյլ զէնքեր լինեն ներկայ գարում,
այնուամենայնիւ շատ արհամարհելի
զարձնող են նոյն իսկ առաստական ու-
ժեղ կառավարութիւնը գոնէ աշ-
խարհի և պատմութեան առջեւ:

ՎՈՐԳՈ
ՀԱՅ ԵՒ ԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒՄՆԵՐԸ
ԳՐԱԿԱՆՈՒ ԽՆԴԻՐԸ

Այս խորագրի տակ Լ. Խո-
պէէնը թիֆլիզից երկու նամակ-
ներ ունի հրատարակած, որոնց
թարգմանութիւնը աւելորդ չենք
համարում ներկայացնել մեր ըն-
թեցողներին):
Թիֆլիզ 27 Օգոստ.

Ս. Պետրուրդում տեղի ունեցաւ
նախարարների ժողովը՝ քննելու հա-
մար հայ եկեղեցական կալուածների
յափշտակութեան հարցը: Կով-
կասի ընդհանուր նահանգապետ
Իշխան Գալստիան, հայերի այդ հիդ-
ւետի թշնամին, ստաջարկում է հայ
եկեղեցու կալուածները բողոքովին զը-
րաւել, և յայտարարում է որ եթէ
այդ հարցը իր ցոյց տւած ձևով չը
լուծվի, ինքը պաշտօնից կը հրա-
ժարվի:

Սինոդի պոպուլար Պոպուլուսցէզ
և ներքին գործոց նախարար Պէլլէն
միայն պաշտպան են հանդիսանում
Գալստիանին, միւսները ընդդիմա-
նում են: Պարոն Վիսէն ամեն ճիգ
թափում է որ այդ ծրագրեր մերժվի:
Բայց Յարը հաստատում է, հակա-
դակ նախարարների մեծամասնու-
թեան դէմ լինելուն, միայն այն
ստորագրութեամբ, շնորհիւ Վիսէի
միջամտութեան, որ սեզազը սրվում
է ոչ թէ գրաւելու մտքով, այլ,
մինչեւ նոր հրաման, հայ եկեղեցու
սեփականատիրական իրաւունքները
պահպանելով, հրամայվում է կալ-
ւածները յանձնելու պետութեան կա-
ռավարելու համար:

Կովկասի հայերը չափազանց գլխ-
առուած են: Ժողովրդի բոլոր խաւերը
մեծ յուզումի մէջ են: Ամենքն էլ
համաձայն են որ չզէտք է հայտնել
ուկազի սանցած նոր դրութեան
հետ: Ամեն կողմերից պատգամաու-
րութիւններ և հանրագրութիւններ
են հասնում Եղիսիանին Կաթողիկո-
սից խնդրելու որ իր համաձայնու-
թիւնը չտայ:

Պոլսոյ հայերի Պատրիարքը Օրման-
եան, Կրօն Ժողովը, ինչպէս և Սը-
սի Կաթողիկոս Պապայեանը Նորին
Ս. Օժոթեան Խրիմեանին գրել են
որ ք զոքէ ամբողջ հայ ժողովրդի ի-
րաւանց գէմ եղած այդ ոտնձգու-
թեան համար և չը տայ իր համա-
ձայնութիւնը, պարզելով որ առսա-
հայ եկեղեցիներին և վանքերի հա-
րստութիւնը միայն առսահայերին
չէն պատկանուած, այլ հայ եկեղեցի-
ներին: այսինքն ամբողջ թորքիայի
Պարսկաստանի, Ռուսիոյ և բոլոր
աշխարհի հայութեան, Այդ հարստու-
թիւնը որ հասնում է 113 միլիոն
բուրս, արդիւնք է այն ուխտա-
որներին, որոնք դարեր առաջ եկել
են Եղիսիանին, աշխարհի բոլոր անկ-
իւններից, ինչպէս և նէրներ են
հայ թագաւորներին, իշխաններին և ազ-
նաւակներին, նոյնիսկ և պարսից թա-
գաւորների կողմից, երբ Հայաստանը
գտնուում էր պարսից իշխանութեան
տակ: Թաթար, պարսիկ և թուրք:

մէն բունակալներն իսկ, որոնք երբեմն իշխել են Հայաստանի վրա, որուն ներքին անկայքն անպակաս զիսկած հայ եկեղեցուն պատկանող հարստութեան:

Կաթողիկոսը գտնվում էր Ալեքսանդրոպոլում ուկազը էջմիածին հասած միջոցին: Այնքան դրապուրի հայերը այդ տխուր լուրը լսելով բողոքի մի շատ զրգուզած հաւաքում են կազմակերպում. բազմաճյուղ մի պատգամաւորութիւն է ներկայանում Կաթողիկոսին եւ Կաթողիկոսից խնդրում մերժել կառավարութեան պահանջը. յետոյ երիտասարդներից կազմված երկրորդ պատգամաւորութիւն, վերջը կանանց կողմից երրորդ պատգամաւորութիւնը նոյն նը. պատակով ներկայանում են Կաթողիկոսին:

Կաթողիկոսի Ալեքսանդրոպոլը թողած վայրկեանին ճանապարհի վրայ այնքան ժողովուրդ է հաւաքվում, որ կառքը անկարող է լինում առաջ շարժել: Ոստիկաններից մէկը թոյլ է տալիս իրեն մտնել Կաթողիկոսի կառքի մէջ եւ նստել նրա կողքին կարծելով որ ժողովուրդը այդպէսով կը վախճայ եւ կը խաղաղի. բայց ամբողջ շտապանք զընկելով, ու ժողովուրդը անկարող վար է իջեցնում կառքից, գոչելով, «թշուառական, չափը անցընում էք, շուտով վար իջիր, այդ ձեր տեղը չէ»:

Երեւանում մի քանի հազար հայեր պտիպում են առաջնորդ Սուքիաս Պարզեան եպիսկոպոսին կառք նստել եւ իրենց առջեւ ձգելով հանդիսաւոր ցոյցով անցնում են նահանգապետի տան առջեւը եւ գնում դէպի էջմիածին:

Ոստիկանութիւնը ուզում է ցրել ցուցարարներին, բայց առաջնորդը նկատում է «իմ հօտս ուզում է ինձ պատել, ինչ իրաւունքով էք արգիլում». բայց նախ քան ցուցարարների էջմիածին հասնելը, Երեւանի զինւորական հրամանատարը աննկատելի կերպով ցուցարարներին մըղում է մի հովտի մէջ եւ բլուրների վրա տեղաւորված զինւորներին հրամայում է ամբողջ վրա հրացան պարպել: Բարբախտաբար Կաթողիկոսը տեղեկանալով պատահածի մասին շտապում է կարապետ վարդապետին ուղարկել, որին յաջողում է եւ զգուշացնել ցուցարարներին այդ պատահանից:

Իշխան Գալիցիին, որի անձնական նախաձեռնութեան է վերաբերվում այս ոճիրը, վախենում է իր կեանքից: Ասում են թէ զգեստների տակից զրահ է կրում. ժողովուրդը կատաղած է իշխանի դէմ, երկու անգամ անտառի միջով անցած պահուէն, հրացան են արձակել նրա վրա, բայց գնդակները մարմնի մէջ չեն թափանցել:

Ժողովրդի զգուշացումը կրկնապատկված է իշխանի թելադրութեամբ պաշտօնական զիջումով: Թերթի մէջ հրատարակված յօդուածի պատճառով, որի մէջ իշխանը զրպարտում է հայ հոգեւորականութիւնը, ասել տալով այսօր որոշումը արվում է եկեղեցու շահերը ինկատի առնելով, եւ որոս կառավարութիւնը աւելի լաւ կը կառավարէ հայ եկեղեցական կառավարը, քան թէ հայ եկեղեցականութիւնը, որ վատ էր կառավարում:

Բոլոր թեմերի առաջնորդները էջմիածնի մէջ ժողով կազմելով, էջմիածնի միաբանների հետ միասին, որոշել են այս մտքով մի պատասխան տալ ուս կառավարութեան:

«Ճանկեց զարեւելի վեր հայ ժողովուրդը իր եկեղեցիները հարստութեան վարչութիւնը վստահել է միայն մեզ, այսինքն իր ընտրած հոգեւորականներին. այդ հարստութիւնը մեզ չէ պատկանում, այլ ժողովրդին. եթէ կառավարութիւնը թողնի կերպով մեզնից ինչ այդ հարստութիւնը, մենք մեր հրաժարականը կը տանք: Առաջնորդները դիմել են Սինոդին, որ հոգեւոր վարչութիւններին, վանահայրերին եւ այլ հոգեւոր իշխանութեանց յանձնարարել որ առանց էջմիածնի հրահանջների, համաձայնութեան ոչ մի նշանցոյց չը տան հանդէպ կառավարութեան պահանջներին»:

Կաթողիկոսը արդէն գրել է նախարարական խորհրդին: Մի քանի օր արդէն անցել է բայց դեռ պատասխան չկայ: Կաթողիկոսը ճարին էլ մի հեռագիր է խփել, նրանից տեսութիւն խնդրելով. անձնապէս անհրաժեշտ բացատրութիւնները տալու համար:

Եթէ որոս կառավարութիւնը իր որոշման վրա պնդէ, իր այդ բռնած գիրքի հետեւանքը այս պէտք է լինի:

1. Հայերը իրենց ընդհանուր Կաթողիկոսի ամբողջ կը տեղափոխեն Սիւս, Կիլիկիա, այսինքն Սիւսի Կաթողիկոսին կընդունեն հայ եկեղեցու պետ: Այս միայն կախում ունի հայ ժողովրդի կամքից:

2. Ոչ մի ուսանալ այլեւս մի սան տիմ չի տալ Ռուսաստանում գտնուող ու եւ հանրային հաստատութեան. նրանք իրենց բոլոր նւէրները կուղարկեն Թուրքիոյ մէջ գտնվող ազգային հաստատութիւններին, ուր, չը նայելով բունակալական իշխանութեան, եկեղեցական եւ դպրոցական կառավարներին դիպրող չը կայ. ինչպէս եւ Պարսկաստանի, Եւրոպայի եւ Ամերիկայի հայ գաղթականութիւններին:

3. Ռուսահայերը, որոնք մինչեւ օրս իրենց ուժերը միայն նւէրում էին իրենց ազգի բարգաւաճման, ըստ պատճառ պիտի լինեն, բնականապէս, փարիլ ուսանական յեղափոխութեան, օգնելու համար տապալելու մի բարբարոս ռէժիմ որը ճնշում է իր լծի տակ գտնվող բոլոր ազգութիւններին եւ որը պաշտօնապէս արեւելեան քրիստոնեաների պաշտպանի տիրողըր առնելով, թալանում է մի պաշտիլ ու հին եկեղեցի, որը քրիստոնէութեան ամենամեծ ծառայութիւններ է մատուցել:

Թիֆլիզ 28 օգոստ.

Պէլզէն Կաթողիկոսին պատասխանել է որ ծարր զինքը հրաւիրում է անմիջապէս հնազանդել ուկազին:

Կաթողիկոսը հեռագրով պատասխանել է որ թէ ինքը եւ թէ ամբողջ միաբանութիւնը գերադասում են հրաժարական տալ, քան թէ նոր որոշումները ընդունելու համաձայնելու: Ասում են որ նախարարական ժողովի մէջ մեծ վիճարարութիւն է տեղի ունեցել: Նրանք, որոնք առաջուց հակառակ են եղել այդ ծրագրին, հրաժարական տալու արամագրութիւններ են ցոյց տալիս, եթէ կառավարութիւնը յամառի այդ անսխտ եւ անիրաւ որոշումը իրականացնել:

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Երկու ամիսը լրանում է ինչ վերջին անգամ Մակեդոնիան ապստամբութեան գոչը բարցրացրեց: Չը նայելով որ այս անգամ Մակեդոնացի ապստամբները իրապէս օրինակելի գործեր կատարեցին, այնուամենայնիւ Նորպան անտարբեր հանդիսատես է ներկայանում այդ փոքրիկ եւ համակրելի ժողովրդի իր ապստամբութեան համար թափած պէրմարդկային ճիգերին: Կարծես նա ուզում է հասկացնել զերթի ժողովրդներին, որ կանոնաւոր ապստամբութիւնն էլ, ժողովրդի զանգվածների զէնի ձեռքին տալի կանգնելն էլ նշանակութիւն չունի Եւրոպական լիբրալիզմի գիտութեան առջև միջամտելու եւ ազատութիւն տալու մաքառող փոքրիկ ժողովրդներին, երբ նա զեռ յոյս ունի թէ իր շահերը իրապէս վտանգված չեն:

Եւրոպական անտարբերութեան գլխաւոր պատճառը այն է որ երկու խոշոր պետութիւններ, Ռուսիա եւ Աւստրիա մի քանի տարիներ առաջ համաձայնութիւն են կայացրել Պատաստութեան պահպանել Ռալկանեան թերակղզու վրա ինչ գնով էլ որ լինի:

Չարմանալին այն է որ Մակեդոնական ապստամբութեան հանդէպ անտարբեր են գրեթէ եւ Եւրոպական բոլոր սօցիալիստները. վերջերս բացառութիւն կազմեց միայն անգլիացի բանւորների միութիւնը, իր ակնածելի համաժողովի մէջ որոշելով անգլիական կառավարութիւնից պահանջել որ ազգու կերպով միջամտէ եւ պաշտպան հանդիսանայ մաքառող, գերմարդկային ճիգեր թափող Մակեդոնային:

Եւրոպացի սօցիալիստների հետ անտարբեր է եւ Եւրոպայի քաղաքակիրթ ժողովուրդը. բացի աննշան համակրական ցոյցերից ոչ մի ակնածելի նշան չէ երևում, որը կարողանար ապացոյց լինել թէ Եւրոպան հետաքրքրվում է Մակեդոնիոյ արևելեամբութիւնի վիճակով:

Այսօր Մակեդոնիայում տիրում է կոտորածը, թալանը, աւերումը, հրդեհը, 150ի չափ զիւղեր քարուքանդ են եղած. ցանքերը բոլորովին փճացած են եւ ձմեռը Մակեդոնայիներին սով է սպառնում. տասնեակ հազարներով մարդիկ են կոտորված, տասնեակ հազարներով մարդիկ արդէն անտուն անտէր եւ սոված թափառում են լեռներում եւ գաղթում են Բուլգարիա: Մակեդոնիայի ներկան ստակալի է, իոկ ապագան աւելի սև ու սարսափելի է: Եթէ գործերը այս կերպով ընթանան, եթէ Եւրոպան չարու-

նակէ իր անտարբերութիւնը, եթէ փոքրիկ Բուլգարիան անկարող լինի իր եղբայրներին օգնութեան հասնել:

Պակաս ողբերգական չէ փոքրիկ Բուլգարիայի վիճակը: Իշխանապետութիւնը, կաշկանդվելով իր գրացի փոքրիկ պետութիւնների ահաջատ վերաւերմանէն, լըսում է իր կոտորվող եղբայրների ճիչն ու տղապակը, տեսնում է հրդեհված գիւղերի բոցերը, տեսնում է երկար տարիներով փայտալած յուսերի խորտակումը եւ ատամները կրճատացնելով անշարժ է մնում իր տեղում, չի կարողանում կասեցնել դուրեւոր թշնամու եւ իր եղբայրները կոտորող ձեռքը: Բողոքներով վախենում է կորցնել եւ այն, ինչ որ այնքան սուղ գնով է ձեռք բերել եւ պահում է մինչև օրս:

Բարկութիւնից, ատելութիւնից եւ կատաղութիւնից դողում է փոքրիկ Բուլգարիան եւ չի կարելի վերջնապէս առել թէ կարող կը լինի իր այդ վիճակում զեռ երկար մնալ:

Արդէն նշաններ են երևում որ նա պատրաստ է ամեն վտանգ յանձն առնել կամ Մակեդոնեան փրկելու եւ կամ նրա հետ միասին ոչնչանալու համար: Բայց երբ խոշոր, ահուկի վտանգը իր բոլոր սեռութեամբ ներկայանում է իշխանապետութեան վարիչների առջև, իշխանապետութիւնը սահմակում է ապագայ խոշոր պատասխանատուութեան առջև:

ՄԵՆ ՄԻՔԻՆԻ ՌՈՒՄԷՆ - ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ՆՅՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Անցեալ ուրախ կարգացուցաւ պատերու վրայ գրուած մեծ յայտարարութիւններ. որով կը հրաւիրուէր որ ամբողջ Ռուսիան բնակիչները մասնակցին այդ օրը տեղի ունենողներէն: Ռուսիան ուսանողներու քիւլուպի առաջ 2000 հոգիի չափ բազմութիւն հաւաքուցեցաւ եւ սկսաւ զոգրել ու ուրախներով առաջ երթալ մինչև Սալա - Տալիա սրահը: Հոն ազգու կերպով խօսեցան մի քանի ուսանողներ Պուլկ. - Մակեդ. կոմիտէի ըրած ջարդերու եւ հանդարտ չի ներշնչուէն, նաեւ թուրք պաշրջապողներուն ըրած կողոպտութիւն կատարած ոճիրներու մասին: Ամբողջ յուզուած ելաւ դուրս եւ ուղեց երթալ թուրք եւ սլաւկար հիւպատոսարանները: Բայց կառավարութիւնը անմիջապէս հանեց ձիււոր ժանտարներ եւ կարեց անոնց առջև, բայց բազմութիւնը յարձակելով ոստիկաններու վրայ կարեցին շղթան եւ յառաջացան զէպի հիւպատոսարան. ասկայն այս երկրորդ անգամին դիմացներն հանուցեան կրկնապատկութիւնը ոստիկաններ եւ բազմութիւնը անկարելի եղաւ աւելի յառաջ գնալ ու ստիպուցեաւ ետ դառնալ: Ամբողջ կէսը ցրուելով միւս կէսը ետ դարացաւ կրկին ուսանողներու քիւլուպին:

եկած է և հոն ալ շտաբը խա-
բած ու թաղէոս անուն խեղճ կօշ
կակարի մը 150 ֆրանքնոց բօ-
լիցան գրպանէլէ, գողնալով պար
տատիրոջ տարած, բայց բռնու-
ած է. Այս քսակահատը
ինձմէ ալ 100 ֆրանք փոխ խնդ-
րած ու մերժուած ըլլալով, ու-
րիշ մի քանի փողոցային տը-
ղաքներու կամ քսակահատ խում-
պըներու հետ միացած զիս ալ
խայթել փորձած է, առանց մը-
տածելու սակայն թէ իր մեղուի
խայթոցը միայն և միայն իրեն
կը վնասէ և զինքը կը սպաննէ.
Մ. Սերան

ՆՈՐ ՍՍՍՏՈՒՍԻ ԿՐԻՔՐ

Խմբագրութիւնս շնորհակալու-
թեամբ ստացաւ հետեւեալ հրա-
տարակութիւնները.

— Հ. Ս. Երամեան. «Անէժք»
ազգային ուլտրաթիւն մէկ ա-
րար. Վենետիկ Ս. Ղալուր, 1903

— Հ. Գ. Գալէմբէրեան. —
«Ոսկեգարեան և ոչ. ոսկեգա-
րեան Հայերէնի խնդիրը» Վի-
էննա խմբագրութիւն «Հանգէս
ամսօրեայի» 1903

— Պ. Ա. Չօպանեան. — «Վայր
կեանք» Փարիզ խմբագրութիւն
«Անահիտի» 1903.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Խիֆլիզի մայր եկեղեցւոյ գաւ-
թի մէջ և քովերը երկու հազար
հոգիի շափ հայեր հաւաքուելով
կառավարութեան գէմ ցոյց են
ըրեր եկեղեցւոյ կալուածները
գրաւելու առթիւ. Ոստիկանու-
թիւնը զէնք գործածեր է, ինչ-
պէս և ցուցարարները. Ժողովը-
դին մէջ հայերէն կոչեր ցրուեր
են.

— Հակակառավարական ցոյց
տեղի ունեցեր է նաև Պարուի
մէջ. այս տեղ զօրքը մասնակցեր
է, 20 հոգի վիրաւորուեր են և
3 հոգի մեռեր.

— Բաթումի և թուրք սահմա-
նազխի մէջ տեղերը, ձորի մը
մէջ Շտուտհարտի արուեստից ճե-
մարանի ուսանող Աբրահամեանի
առաջնորդեալ թուրքիս անց-
նել ուզող հայ յեղափոխական
խումբ մը ռուս սահմանապահ
զօրքի հետ ընդհարում ունենա-
լով ջարդուեր է, ըստ եւրոպա-
կան տեղեկութեանց, իսկ մեր
ստացած մասնաւոր տեղեկու-
թեան համաձայն իւրմը ջար-
գուած չէ, այլ ձերբակալուած է.
Խումբը իր հետ գրոշակ մը
ունի եղեր. «Մահ կամ ապստու-
թիւն» մակագրով. Խումբը ու-
նեցեր է 30 հրացան, ատրճա-
նակի 6000 փամփուշտներ, 15
հատ տինամիտ, 6 պումպա և ու-
րիշ զէնքեր.

— Խիֆլիզէն եւրոպական
թերթերուն կը հեռագրեն որ
կարսի մէջ, Թանտօեան կոչուած
պարոնի մը տան մէջ տինամիդի
պայթում տեղի ունեցեր է, ըս-
պաններ են չորս հայեր. ինչ-
պէս և Թանտօեանը. Այդ միջա-
դէպի առեւն վիրաւորուեր և մե-
ռեր է նաև Եմբրիկահայատակ
Ջօն Նահիկեան անունով մէկը.
Պայթումը տեղի ունեցեր է Նա-
հիկեանի պոմպա լեցուցած ա-
ստի.

Տան մէջ գտնուեր է 38 պղն-
ձեայ գնտակներ, երեք լապտը
գլխուքներով.

— Լօնտօնի հիւանդանոցնե-
րէն միոյն մէջ, վիրաբուժական
գործողութենէ մը վերջ՝ մեռեր է
Սուքիաս վարդապետ Պարոնեան.
Պարոնեան աշխատասէր կրօնաւոր
մըն էր.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկար կառավարութիւնը
խիստ լեզուով նօթաւ մը ներկայա-
ցուցեր է եւրոպական պետու-
թեանց ներկայացուցիչներուն.
պահանջելով որ թուրքիոյ վրայ
ճնշում գործ դնեն Մակեդոնիոյ
ժողովրդին դէմ գործ գրուած
զաղանութիւններուն վերջ տալու
համար, հակառակ պարագային
պուլկար կառավարութիւնը՝ ինք
ստիպուած պիտի ըլլայ Թուրքի-
ան զսպելու.

— Պատերազմական նախարա-
րութեան հրամանով երեք զօրա-
բաժնի պահեստի զօրքերը զէն-
քի կոչուած են. Պահեստի զին-
որները շար արագութեամբ զը-
րուեր և իրենց թուղթերը ըն-
դուներ են.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ալիկատան են հասեր անգլի-
ական հինգ զրահաւորներ, ուր
շարքով մը չափ պիտի մնան.
Ալէքըլիի նաւահանգիստն ալ 5
զրահաւորներ հասեր են.

— Ռուս կառավարութիւնը կը-
կին թուրքիայէն կը պահանջէ 78
թուականի պատերազմական տու-
գանքներուն մնացորդը.

Բ. գուռը հրամայեր է որոշել
Մակեդոնիոյ մէջ յոյներուն կրած
փրստին չափը և պետական գան-
ձարանէն վճարել.

— Սեպ. 3 Պուլէն հեռագիր-
ներով կիմացնեն որ Բիթուլայի
նահանգին մէջ վերջերս 100ի
չափ ապստամբներ սպաննուած
են և կառավարութեան ձեռքը
անցած են բաւականաչափ պոմ-
պա, հրացան և այլն. Ապստամբ-
ներուն միայն զիւղացիները
սկսեր են ներողութիւն խնդրել

և անձնատուր ըլլալ.
— Սուլթանը իրատեղով մը
գերմանական գործարաններուն
երեք թօրփիլանաւ պատուիրած
է.

— Սօֆիայէ «Թան» սեպ. 1 ին
կը հեռագրեն որ թուրք զօրքի-
րը պուլկար սահմանազուլը
անցնելով մեծ քանակութեամբ
ոչխար տարեր են.

— «Պիլարո» Պուլսոյ թղթակի-
ցը կը հեռագրէ թէ ռուս և ֆը-
րանսական զեապանները սալաու-
նական նմակներ ընդուներ են Մա-
կեդոնական «Օմիտէն» «Պօմի-
տաճի»ները նմակներու մէջ կը
յայտարարեն որ, եթէ Ռուսիա
և Թրանսա ինպատ Մակեդոնիոյ
ընդ միջոցներ ձեռք չառնեն,
իրենք տինամիդով օղը պիտի
հանեն Պուլսոյ ռուսական և ֆը-
րանսական բոլոր հաստատու-
թիւնները.

Երկու զեապաններն ալ այդ
նմակները յանձներ են արտա-
քին գործոց նախարարին, որ և
պէտք եղած միջոցները ձեռք
տուած է. Միևնոյն սպառնալիք-
ները եղեր են Բերայի և Կալա-
թայի թուրքի ընկերութեան.

— Ետիրնէէն Պուլսոյ վախած
թուրքերը կրկին իրենց տեղերը
զրկուած են շոգենաւելով.

— Թուրք «Մալիմաթ» թեր-
թը կը հարգէ որ կէվլիկի յոյն
երկտասարգութիւնը հեռագրով
Սուլթանէն խնդրած է զիրենք
զինուոր ընդունէ. Սուլթանը այդ
խնդիրը կատարած է.

— Մակեդոնիոյ ապստամբնե-
րու ժամանակաւոր կառավարու-
թիւնը շրջաբերական մը տարա-
ձեր է ժողովրդին մէջ, որուն
մէջ բացատրելով թէ պուլկար
ժողովուրդը այլևս բան մը կոր-
ցնելու վախէն ազատէ, որովհե-
տե թուրքերը արդէն ամեն
փրստ հասցուցին, հրաւէր կը
կարգայ որ ամենքն ալ զէնքի
դիմեն, որովհետեւ ազատու-
թեան օրը մօտիկ է.

ՅՐԱՆՍԱ

Բրետօն նահանգի Թրէքէ քա-
ղաքի մէջ քանի մը օր առաջ
արձան կանգնեցուցին Էրնէստ
Ռենանին համար. Արձանի կանդ-
ման հանդէսին ներկայ եղեր է
և նախարարապետ Գոմբ. Բրէ-
տօնը կղերականներու ամենա-
զօրեղ տեղն է և կը կարծուէր
որ մեծ խռովութիւններ տեղի
պիտի ունենար, մանաւանդ Յի-
սուրը մարդ հոշակող փիլիսոփա-
յին արձանը պիտի կանգնեցնէ-
ին Մայր եկեղեցիին դիմացը
գտնուած հրապարակին վրայ.
Բարեբաղդաբար մեծ խռովու-
թիւններ տեղի չեն ունեցեր.

300,000 ՅՐԱՆՔԻ ՄԵՆ ՊԱՐԳԵԻԸ

Մեր յայտարարութեան համաձայն
յառաջիկայ 1 հոկտ. եւ 18 սեպտ. ին
քաշուելիք ռուսիայի երկաթուղի պար-
տատմանը բրոմէսները առինք,
որոց թիւերը ստորեւ նշանակուած է.
այս բրոմէսներէն ելած պարգեւնե-
րուն 3/4 երեք չորրորդը պիտի բա-
նենք մեր պատուական յաճախորդաց,
ուստի ամէն անոնք, որ բան մը չը
տալով՝ կուզեն բացատրել շահ մը ու-
նենալ՝ փութան մենէ կանխիկ այլ և
այլ նիւթեր անոնն, որպէսզի արժա-
նանան սոյն բրոմէսներէն ելած
պարգեւներուն, այս անգամուն առա-
ջին մէկ պարգեւն է 300,000 ֆրանք.
ամէն երկու ամիսը անգամ մը պիտի
տաննք սոյն բրոմէսներէն և եթէ
քաջալերութիւն գտանք պատուար-
ժան Ազգայիններէն, ուրիշ պարգե-
ւաւոր թուղթերու բրոմէսներ ալ պի-
տի տաննք. Ելած գումարները՝ մեծ
ու պզտիկ՝ վերոյիշեալին նման բաժ-
նելու մեր պատ. յաճախորդաց.

Մեր կեդրոնատեղին է Մուսալայի
հրապարակ, Հաճի Հասան խանին
դէմը. Կոչկակար Սիմօն Ալայի խա-
նութը.

Բրոմէսներուն թիւը. 938029
4399344
Հ. Մ. Կիւմիշնէւան
31 Օգոստոս 1903
Վառնա

ԿԸ ՓՆՏՈՒՄ

Սարգիս Մխոյեան 35 տարեկան,
(Պիթիլսի) Կորվու դիւզացի, 1899/4
աստիճան ուր գտնուիլը յայտնի չէ. Ի-
րեն ծանօթ, բարեկամ և կամ հաս-
ցնէ գիտցողներ թող հաճին իմաց
տալ.

Մարտիրոս Ռաչատուրեան (Պիթ-
իլսի) մալ կոսմ պօ,
քոռյ ճօ. 9 ի. Ամերիկա
եւ կամ խմբագրութեանս.

ԴԻՒՐԱՍՍՏՁԵԼԻ

ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

Տէր եւ Տիկին Գայատեան կընդու-
նին թոշակաւոր հայ պատանիներ,
կուսան անոնց հայկականին հետ
Ջուրիցերիական ստաղջ դաստիարա-
կութիւն, կը պատրաստեն զանոնք
իրենց տարիքին եւ ընդունակութեան
յարմար դասընթացներու քաղաքիս
վարժարաններուն մէջ, կապանութեան
ընտանեկան խնամք եւ գոհացուցիչ
յաջողութիւն.
Մանրամասնութեանց համար անյ-
պաղ դիմել առ

Յ. Գայատեան
47 Թանկեղաբոս
Պալ (Սուրիզ)

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна